



RA State Fund
of Social Insurance



USAID Armenia,
Social Protection Systems
Strengthening Project

ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամը և ԱՄՆ ՄՁԳ Հայաստան, Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման ծրագիրը ստորագրում են համագործակցության համաձայնագիր

17/12/07-16:00 – ՀՀ սոցիալական ապահովագրության հիմնադրամի (ՍԱՊՀ) նախագահ Վազգեն Խաչիկյանը և ԱՄՆ ՄՁԳ Հայաստան, սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման ծրագրի տնօրեն դոկտոր Էմի Ռեմնը այսօր ստորագրեցին գործակցության համաձայնագիր «Արամ Խաչատրյան» տուն-թանգարանում կայացած ասուլիսի ժամանակ: Միջոցառման ընթացքում երկու կողմերը նաև խոսեցին համատեղ կատարվելիք մի շարք ծրագրերի մասին ուղղված սոցիալական ապահովագրության ոլորտում հաճախորդների սպասարկմանը, ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը, բիզնես գործընթացների կառավարմանը, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմանը և այլ պետական գործակալությունների հետ տեղեկատվության փոխանակմանը:

Պրն. Խաչիկյանը նշեց. «Վերջին տարիները նշանավորվել են Հայաստանի սոցիալական ապահովագրության ոլորտի զգալի և լայնածավալ զարգացումներով: Հիմնադրամը գտնվում է բարեփոխումների փուլում և միջազգային համագործակցությունն այս ոլորտում նպատակաուղղված է միջազգային լավագույն փորձի ներմուծմանը և քաղաքականության տարբերակների նշակման զարգացմանը»: Մամլո ասուլիսին ներկա էին բարձրաստիճան հյուրեր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունից, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունից, ՀՀ կենտրոնական բանկից, ՀՀ ազգային ժողովից, ինչպես նաև ԱՄՆ ՄՁԳ/Հայաստան առաքելությունից և այլ գործակից միջազգային կառույցներից:

Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության կողմից Միջազգային զարգացման գործակալության միջոցով Հայաստանին շնորհված ՍՊՀՀ ծրագիրը բարեփոխումների խոշորագույն ծրագրերից է Հարավային Կովկասում: Այն բազմակողմանի նախաձեռնություն է՝ նպատակաուղղված սոցիալական ապահովագրության տրամադրման բարելավմանը, աշխատաշուկայի բարեփոխումների և մասնագիտական անվտանգության չափանիշների ներմուծմանը, ինչպես նաև պետական օժանդակությունից խոցելի բնակչության կախվածության նվազեցմանը: Ծրագիրն իրականացվում է Սըրվիսիզ գրուփ, ինք.-ի կողմից՝ 2006-2011թթ-ի ընթացքում: Ծրագրի նպատակն է ներկայիս սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացումը, կառավարական գործընկերների ինստիտուցիոնալ կարողությունների բարելավումը, պետական-մասնավոր հատվածի համագործակցության ուղղորդումը, ինչպես նաև սոցիալական ծառայություններ մատուցող հասարակական կազմակերպությունների կարողությունների խթանումը:

Ծրագիրը տեխնիկական օժանդակություն է տրամադրում սոցիալական պաշտպանության ոլորտի չորս կարևոր ոլորտներում՝ սոցիալական ապահովագրություն, զբաղվածության ծառայություններ, աշխատանքի անվտանգություն և սոցիալական օժանդակություն՝ բնակչության անապահով խավերին: Ծրագրի նպատակներից է նաև քաղաքացիների հիմնական սոցիալական կարիքների բավարարման հարցում նպաստել կայունության ձևավորմանը՝ միևնույն ժամանակ նվազեցնելով նրանց կախվածությունը պետական օժանդակությունից: Ինչպես նշեց ծրագրի տնօրեն դոկտոր Ռեմնը. «ՀՀ ՍԱՊՀ-ի հետ երկարաժամկետ համագործակցությունը նախատեսում է նաև կենսաթոշակները էլեկտրոնային եղանակով վճարելու համակարգի ստեղծում: Այս համաձայնագիրը ևս մեկ ձեռքբերում է սոցիալական ապահովագրության ոլորտը Հայաստանում զարգացնելու գործում»:

Միջոցառման կամ ԱՄՆ ՄՁԳ ՍՊՀՀ ծրագրի մասին լրացուցիչ տեղեկատվության համար այցելեք www.spss.am և www.sif.am կայքերը: